ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1956 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Վ. Հարությունյան

ՄԻ ՀԱՅԱՏԱՌ ՄԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1954 թ. ապրիլին մեկնելով Կիև՝ մասնակցելու համար Ուկրաինական ՍՍՌ ճարտարապետության ակադեմիայի հոբելյանական սեսիայի աշխատանքներին, առիթ ունեցա ծանոթանալու Կիևի ճարտարապետական հուշարձաններին, որոնցով այնքան հարուստ է քաղաքը։

Ռուսական ճարտարապետության հնագույն հուշարձան՝ Կիևի Սոֆիայի տաճարը (1037), որն այն օրերին հիմնովին նորոգվում էր, առանձնապես գրավեց իմ ուշադրությունը տարածական իր հարուստ ձևերով և ներքին պատերին եղած բազմաթիվ որմնանկարներով։

Հյուսիս-արևելյան խորաններից մեկում, որը սուրբ Վլադիմիրի անունն է կրում, գտնվում է իր չափերով բավականաչափ մեծ մարմարե մի սարկոֆագ, որի բոլոր կողմերը և երկթեք խուփը ամբողջովին պատած են գարդաքանդակներով։ Սարկոֆագը համարվում է Յարոսլավ իմաստունի գերեզմանաքարը և զարդաքանդակների ոճական առանձնահատկությունների շնորհիվ՝ կարող է վերագրվել ռուսական արվեստի վաղ շրջանին 11—12-րդ դդ.։

Իմ ուշադրությունը գրավեցին սարկոֆագի խուփի հյուսիսային երեսին առանձին-առանձին փորագրված հայկական 4 տառերը, որոնցից առաջին երկուսը իրենց նկարով բավականաչափ հին ձևեր ունեն և կարող են վերաբերվել 11—12 դարերին։

Ի՞նչ առիթով են արված այս մակագրությունները, արդյոք դրանք թողել են սարկոֆագը նկարազարդող հայ վարպետները, թե տաճար եկած հայ ուխտավորները. դժվար է ասել, սակայն անտարակույս այդ մակագրություններն ուշագրավ են և արժանի հատուկ ուսումնասիրության, որպես հայ-ռուսական հարաբերությունների վաղագույն փաստաթղթերից մեկը։

Ներկա հաղորդման նպատակն է մեր պատմաբանների և հայկական գրի մասնագետների ուշադրությունը հրավիրել վերոհիշյալ մակագրությունների վրա, դրանք ավելի հանգամանորեն ուսումնասիրելու համար։ Ստորև բերվում են այդ տառերի գծանկարները։

Ա Գ Ա Պ